

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ

Ազահութիւնը կը ստիպէ, որ աշխատիս, բայց կ'արգիլէ, որ վայելես աշխատանքիդ արդիւնքը: Դրամասեր մարդը՝ լոկ դրամը սիրող մարդն է, մինչդեռ ազահ մարդը ամէն ինչ ունենալ ուզող մարդն է:

Ազահութիւնը կը կորսնցնէ մարդը, որովհետեւ թոյլ չի տար որ ազահ անձը իրմէ դուրս ու իրմէ զատ ուրիշ մէկը տեսնէ, կը սպաննէ մեր մէջ աղքատասիրութիւնը եւ մեզ թշնամի կը դարձնէ աղքատին ու աղքատասէր Յիսուսին: Ապրիլ ուզող անձը պետք չէ անձնատուր ըլլայ ազահութեան, որովհետեւ «ազահութիւնը իրեն անձնատուր եղողները կը մեռցնէ» (Առ. 1.19): Ազահ մարդը ոչ միայն չողորմիր, այլ նաեւ՝ կը կողոպտէ ողորմութեան կարօտ մարդը: Կարելի է դրամասէր ըլլալ առանց մարդիկը ատելու, բայց կարելի չէ ազահ ըլլալ եւ չատել մարդիկը, որովհետեւ ազահ մարդը բան մը շահիլ ուզող բոլոր մարդիկը իրեն թշնամի կը նկատէ:

Ազահութիւնը մարդիկը կ'առաջնորդէ կաշառակերութեան: Սամուէլի որդիներուն համար կ'ըսուի. «Ազահութեան ետեւէն իյնալով՝ կաշառք կ'առնէին» (Ա. Թգ.8.3): Եւ ի՞նչ է կաշառակերութիւնը եթէ ոչ մեր իրաւունքէն անելի առնելը, եւ ուստի՝ ուրիշին իրաւունքը խլելը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, Կարդա՛ր Սաղմոս 34


Անդադար Տէ՛րը պիտի օրհնեմ. անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ: Տէ՛րն է միակ պարծանքս: Թող տառապեալները լսեն եւ ուրախանան: Ինձի հետ Տէ՛րը փառաւորեցէք, միասնաբար անոր անունը փառաբանեցէք: Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց, զիս ազատեց բոլոր վախերէս: Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք, եւ յուսախար չէք ըլլար բնաւ: Ես՝ տառապեալս՝ Տիրոջ դիմեցի, եւ անկէկա խնդրանքս լսեց, զիս ազատեց բոլոր նեղութիւններէս: Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողքին պահակ կը կանգնի, եւ փորձանքներէն զանոնք կ'ազատէ: Ճաշակեցէք, եւ տեսէք, թէ ի՞նչքան քաղցր է Տէրը: Երանի անոր, որ Տիրոջ կ'ապաւինի: Տիրոջ երկիւղը ունեցէք, դուք՝ ո՛վ սուրբեր. անոր երկիւղը ունեցողները ո՛չ մէկ բանի կարօտ են:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐՈՒՆԱԿԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- *facebook-ի էջ jerak ճրագ թերթ*



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍԴ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 1 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2020 ԹԻՒ 44

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 22.15-25: Եփ. 1.1-14
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.17-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.17-21

Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը, որ չզիտցուի եւ երեսան չզայ: Ուրեմն ուշադիր եղէք, թէ ինչպէ՞ս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ, թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խումն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. *«Մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:*

Յիսուս ըսաւ. *«Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:*

«Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»

Վստահաբար մեզմէ իւրաքանչիւրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Սիրելիներ կարուորը կամենալն է. եթէ կ'ուզէք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պետք է կատարենք, ականջ պետք է տանք Աստուծոյ ձայնը լսելու աղօթքի ճամբով: Աստուծոյ ձայնը լսելու համար պետք է լաւապէս ճանչնանք զԱստուած Աստուածաշունչին ընդմէջէն: Աստուածաշունչը մեր ամէնօրեայ հոգեւոր սնունդի աղբիւր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարաւը ունինք: Կարդանք, սնանկնք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն ինչ, որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱԿԱՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸՆ
22.15-25

Այսպէս կ'ըսէ Տէրը, Երկնային Ձօր-
քերու Տէրը. «Գնա՛ արժունի հազարա-
պետ Սոմնասի դիւանը մտի՛ր եւ ըսէ՛
իրեն.՝-

Ինչո՞ւ հոս եկած ես, ի՞նչ գործ ունիս
հոս, որ այստեղ քեզի գերեզման փորել
կու տաս, այս բարձունքին վրայ քեզի
ժայռափոր դամբարան կը շինես:

Լսէ՛, ո՛վ մարդ, Երկնաւոր Ձօրքերու
Տէրը քեզ այդ տեղէն պիտի հանէ եւ
փաշկոտելով դուրս նետէ: Պիտի առնէ
քեզմէ պատմունանդ եւ փառքի պսակդ,
քեզ մեծ եւ անսահման երկիր մը պիտի
նետէ եւ հոն պիտի մեռնիս: Քու գեղե-
ցիկ կառփղ անարգանքի առարկայ պի-
տի ըլլայ եւ իշխանական տունդ՝ ոտքի
կոխան:

Աստուած քեզ քու պաշտօնէդ եւ քու
դիրքէդ պիտի հեռացնէ:

Այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս,
Քեղկիայի որդի Եղիակիմը, եւ քու
պատմունանդ անոր պիտի հագցնեմ,
անոր պիտի տամ քու իշխանական
պսակդ, եւ անոր պիտի յանձնեմ
արժունի հազարապետութիւնը, որպէս-
զի հօր մը պէս կառավարէ Երուսաղէմի
եւ Յուդայի բնակիչները:

Դաւիթի տան վերակացութիւնը անոր
պիտի տամ. պիտի իշխէ, եւ ո՛չ ոք պիտի
ընդդիմանայ անոր: Իր վնիւնները բա-
ցարձակ պիտի ըլլան. ո՛չ ոք պիտի
կարենայ փակել ինչ որ ինք կը բանայ,
եւ ո՛չ ոք պիտի կարենայ բանալ ինչ, որ
ինք կը փակէ:

Ձայն իշխան պիտի կարգեմ եւ ամ-
բօրէն հաստատեմ պատին ամրացում
գամի մը պէս, եւ անիկա իր հօրը տան
փառքը պիտի ըլլայ:»



1.1-14

Ես, Պօղոս, Աստուծոյ կամֆով Յի-
սուս Քրիստոսի առաքեալը, կը գրեմ
Եփեսոս բնակող եղբայրներուդ, Յիսուս
Քրիստոսի հաւատացողներուդ: Թող
Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս
Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն
պարգեւեն ձեզի:

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ Յի-
սուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով
մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն տեսակի
հոգեւոր օրհնութեամբ: Անիկա աշխար-
հի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած
էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն պատ-
կանելու համար, որպէս սուրբ եւ անա-
բաւ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ նա-
խասահմանեց Յիսուս Քրիստոսի ձեռ-
քով իր որդիները ըլլալու, որովհետեւ
ա՛յդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովեմք զինք այն փառքին
համար, որ մեզի շնորհեց իր սիրելի
Որդիին միջոցաւ: Արդարեւ, անո՛վ
փրկուեցանք եւ անոր արիւնով մեր
մեղքերուն թողութիւն գտանք: Ո՛րքան
մեծ է իր շնորհքը, որ առատօրէն
տուաւ մեզի՝ ամենայն իմաստութեամբ
եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին
համաձայն մեզի յայտնեց շատ կանու-
խէն պատրաստ իր ծրագիրը, որ
Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ
ծրագիրը սա է, որ երբ ժամանակները
իրենց լրումին հասնին, Քրիստոս իր-
մով պիտի բովանդակէ ամէն ինչ, որ
կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՀՌՈՍԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԲԱՀԱՆԱՅԻՅՆ ԵՒ
ՍԱՐԿԱԲԱԳԱՅՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՅՆ

3-րդ դարուն Հռոմի մէջ ապրած ֆաշ
առաջնորդ եղած է Ստեփանոս Հռոմայ
հայրապետը: 254 թուականին կը բարձ-
րանայ Հռոմի աթոռին վրայ եւ կը գա-
հակալէ մինչեւ իր նահատակութիւնը՝
257 թուական:

Ստեփանոս Հայրապետ եղած է իր
հօտը պաշտպանող եւ ֆաշալերող հո-
գեւորական մը: Ան նոյնիսկ դարձի կը
բերէ եւ քրիստոնեայ կը մկրտէ Նեմե-
սիոս անունով հեթանոս իշխան մը եւ
անոր կոյր դուստրը, որ մկրտուելէն
ետք կը բժշկուի եւ աչքերը կը բացուին:
Իշխանը նոյնիսկ սարկաւազ կը ձեռ-
նադրուի եւ սակայն իր ունեցած հաս-
տատ հաւատքին համար կը նահա-
տակուի կայսեր կողմէ: Այսպիսով Ստե-
փանոս հայրապետի գահակալութեան
շրջանին բազմաթիւ հոգեւորականներ
եւ հաւատացեալներ կը նահատակուին
Հռոմի մէջ:

Օր մը, երբ Ստեփանոս Հայրապետ Ա.
եւ Ամմահ պատարագ կը մատուցէր,
յանկարծ զինուորներ կը պաշարեն եկե-
ղեցին եւ կը փորձեն խորտակել դուռը
եւ ներս մտնել: Այն պահուն երբ Ա.
Հայրապետը կը հաղորդուի եւ կը հա-
ղորդէ ժողովուրդը, զինուորները ներս
խուժելով կը նահատակեն զինք իր ա-
րիւնը խառնելով Ա. Հաղորդութեան
սկիհին մէջ գտնուող Քրիստոսի սուրբ
արեան: Հաւատացեալներ պատուով կը
թաղեն զայն: 8-րդ դարուն անիւնները
կը փոխադրուին իր անունը կրող վանքի
մը մէջ եւ այնտեղ կը հանգչի ան այսօր:

Տօներ այս տարի կը գուգադիպի Երկու-
շաբթի 2 Նոյեմբերին:

ՅԱՐԱՏԵՒԵԼ

Սաղմոսերգուին համար, իր պա-
րագան շատ պարզ է եւ յստակ. «Երկրի
վրայ ալ քեզմէ գատ ո՛չ մէկուն կը
բաղձամ» (Սաղմ. 73.25): Մեր հոգեւոր
կեանքի ամէն տեսակ յառաջդիմու-
թիւնը կը յատկանշուի դէպի մէկ
նպատակի եւ կարիքի ձգտումով.՝ Աս-
տուած՝ Ինք: Հոգեւոր կեանքի մեր բո-
լոր յառաջդիմութիւնները պէտք է
ծառայեն զԱստուած աւելի մօտէն
նանչնալու եւ սիրելու նպատակին, որ-
պէսզի կարենանք Սաղմոսերգուին պէս
ըսել. «Աստուած իմ սրտիս գորու-
թիւնը ու իմ բաժինս է յաւիտեան» (73.
26):

Մեր այդ հեռանկարը կը փոխէ մեր
վերաբերմունքը ամէն բանի հանդէպ:
Տառապանք եւ նեղութիւն կը դառնան
միջոցներ՝ Աստուծոյ հանդէպ մեր ծա-
րար յագեցնելու: Յուսահարութիւն-
ներ կը վերածուին միջոցներու, մեզ
հետզհետէ հեռացնելով երկրային զբա-
ղումներէ՝ աւելի Աստուծոյ հետ յարա-
բերութեան մէջ մնալու համար: Նոյ-
նիսկ մեղքը, ապաշխարութեան փոր-
ձառութենէն ետք, մեզ Աստուծոյ ա-
ւելի մօտեցնելու ազդակի մը կը վե-
րածուի, որպէսզի Անոր սէրն ու ներդ-
րամտութիւնը մօտէն զգանք: Բոլոր
բաները բարիին գործակից կը դառ-
նան, երբ մեր նպատակը բարձրագոյն
բարութեան՝ Աստուծոյ մօտենալու
համար է:

Առաքեալին պէս, մեմք ալ կրնանք
ըսել. «Հետամուտ եմ բռնելու զայն,
որուն համար ալ բռնուեցայ Քրիստո-
սի Յիսուսէ» (Փիլիպ. 3.12): Ի՞նչ բանէ
մղուած յառաջ կ'ընթանանք մեր հոգե-
ւոր կեանքին մէջ: Պէտք է խոնարհա-
բար եւ երախտագիտութեամբ փո-
խադարձեմք Անոր սիրոյն: Բայց ամէն
բան կը սկսի Աստուծով: Ինքն է, որ
կը փնտռէ մեզ, որպէսզի մեմք ալ
փնտռենք Ձինք:

Աստուած մեզ այնքան շատ կը սի-
րէ, անոր համար չ'ուզեր, որ մնանք
այնպէս՝ ինչպէս որ ենք: